

## ԱՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ VII դԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

### ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

VII դարի սկիզբը Հայ եկեղեցու համար ծանր և դավանաբանական փորձություններով հարուստ ժամանակաշրջան էր: Այս շրջանում ուժեղացել էին Վրաց եկեղեցու անջատողական նկրտումները, որոնք խարսխված էին դավանաբանական հիմքերի վրա: Վրաց անջատողականությունը կարող էր նմանատիպ այլ քայլերի ձեռնարկման վտանգավոր նախադեպ դառնալ: Ուստի հայոց հայրապետների գլխավոր խնդիրն էր ամեն գնով պահպանել Հայ եկեղեցու ամբողջականությունը, կանխարգելել ցանկացած պառակտիչ դրսևորում:

591 թ. Հայաստանի քաղաքական բաժանմանը հետևեց Ավանում երկրորդ կաթողիկոսական աթոռի ստեղծումը, որը բխում էր Հայաստանը բռնազավթելու Բյուզանդիայի ծրագրերից: Հակաթոռ կաթողիկոսության հիմնումը որոշ չափով նվազեցրեց Հայրապետական աթոռի կենտրոնածիգ ուժը՝ նկատելիորեն խաթարելով նվիրապետական կառուցվածքը: Որպես հետևանք՝ Սյունյաց Գրիգոր Բ եպիսկոպոսի պաշտոնավարման շրջանում (584-599) ժամանակավորապես ընդհատվեցին կաթողիկոսական և Սյունյաց աթոռների փոխհարաբերությունները:

Սակայն այդ վիճակը երկար չտևեց: VII դարի սկզբներից Սյունյաց եպիսկոպոսությունը, ի դեմս իր առաջնորդների, եռանդուն կրոնական գործունեություն էր ծավալել՝ հանդես գալով Հայ եկեղեցու միասնականության վերականգնման դիրքերից:

Գրիգոր Բ-ին փոխարինեց VII դարի Սյունյաց նշանավոր եպիսկոպոսներից մեկը՝ Քրիստափորը, որի մասին տեղեկություններ են հաղորդում Ստ. Օրբելյանը, Ուխտանես պատմիչը, «Գիրք թղթոցը»: Մեծ գովասանքով է հիշում նրան Սյունյաց պատմիչը՝ անվանելով «փառաւորեալն և երանելին Քրիստափոր», «սքանչելին Քրիստափոր»<sup>1</sup>: Քրիստափոր եպիսկոպոսը աթոռակալել է տասը տարի՝ 599-608 թթ.<sup>2</sup>: Նա ձեռնադրվել է Աղվանքի եկեղեցուն: Աղվանից եկեղեցական նվիրապետության գավազանագրքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Քրիստափորի պաշտոնավարման տարիները համընկնում են Աղվանից Վիրո կաթողիկոսի հովվապետության ժամանակաշրջանին (596-630)<sup>3</sup>, հետևաբար, նրան, ամենայն հավանականությամբ, ձեռնադրել է Վիրո կաթողիկոսը:

<sup>1</sup> Ստ. Օրբելյան, Պատմութիւնն Երևանի և Սիսական, Թիֆլիս, 1910, գլ. ԻԵ, էջ 98, գլ. ԿԹ, էջ 454:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. ԻԵ, էջ 98, նաև՝ Ն. Ակինեան, Պետրոս եպիսկոպոս Սիսանեաց, «Հանդես ամսօրեայ», 1903, № 8, էջ 252: Ըստ Ղ. Ալիշանի՝ Քրիստափորը հովվել է 595-605 թթ. (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 20):

<sup>3</sup> Տե՛ս Ն. Ակինեան, Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իւր պատմութիւնն Աղուանից, «Հանդես ամսօրեայ», 1953, №7-9, էջ 572, նաև՝ Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, «Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան», Եր., 2002, էջ 43:

606-607 թթ. գումարված Դվինի եկեղեցական ժողովի առաջին նիստում, որն ուղղված էր քաղկեդոնականությանը հարած հոգևորականների դեմ, ներկա էր Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը: Վերջինս ժողովի նախաձեռնողներից էր և Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի տասը աթոռակիցներից մեկը: Նա ընտրությունից առաջ էլ բարձր դիրք ուներ և այդ գործի գլխավորներից էր<sup>4</sup>: «Ապա միաբանեալ ամենայն Հայոց երկուց կողմանցն,- գրում է Ստ. Օրբելյանը,- որ ի յունաց բաժին և որ ի պարսից. և ժողովեալք եպիսկոպոսաց և վանականաց ի Դվին՝ կամեցան կաթողիկոս նստուցանել. և ոչ յաջողեցաւ այն անգամ: Վասն որոյ եկն ի միաբանութիւն ժողովոյն Քրիստափոր Սիւնեաց մետրապօլիտ, և արարին կանոնս և եղին սահման եկեղեցւոյ»<sup>5</sup>: Ի թիվս այլ եպիսկոպոսների՝ Սյունյաց առաջնորդն այդտեղ իր ստորագրությամբ վավերացնում է դավանական միասնությունը: Այս վկայություններից պարզ է դառնում, որ ժողովի առաջին նիստում արդեն վերականգնված էին նախկին հարաբերությունները Սյունյաց և Հայրապետական աթոռների միջև:

Դվինի 607 թ. ժողովի երկրորդ նիստում, երբ կաթողիկոս ընտրվեց Աբրահամ Աղբաթանեցին (607-615), նրան ձեռնադրող գլխավոր եպիսկոպոսներից մեկը Քրիստափոր Սյունեցին էր, «իբր...պարսկական բաժնին նախաթողը»<sup>6</sup>: «Եւ նստուցանեն պատրիարք Հայոց,- հավելում է Ստ. Օրբելյանը,- յաւուր ողոգմէնի տօնին արմավենեացն զՏէր Աբրահամ՝ Ռշտունեաց եպիսկոպոս և բաժանեալ աստ ուրեմն Սիւնեաց աթոռն յօղեցաւ վերստին ի գլուխ պատուական ի սուրբ Գրիգորի աթոռն և ի յաջորդ ի Տէր Աբրահամ»<sup>7</sup>: Եպիսկոպոսների միջև կնքվում է միաբանության ուխտ: Այսպիսով, 607 թ. Սյունյաց եպիսկոպոսական աթոռը ամբողջությամբ վերականգնեց հարաբերությունները Հայոց կաթողիկոսության հետ՝ ճանաչվելով Հայ եկեղեցու գլխավոր և բարձրապատիվ աթոռներից մեկը:

Հայ եկեղեցու գործերի կարգավորման հարցում մեծ դեր է ունեցել Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին<sup>8</sup>: Այդ հարցում վերջինիս գործակիցն էր Սյունյաց Սահակ իշխանը (597-607)<sup>9</sup>, որը մեծապես նպաստել է Սյունյաց և Հայրապետական աթոռների փոխհարաբերությունների կարգավորմանը:

Քրիստափորին հաջորդեց Տէր Դավիթը՝ ձեռնադրված Աբրահամ կաթողիկոսի կողմից: Սյունյաց նոր եպիսկոպոսի ձեռնադրությունը, հավանաբար, նորընտիր կաթողիկոսի առաջին շնորհաբաշխումներից էր: Տէր Դավիթը բարեպաշտ և սրբակրոն հոգևորական էր և լուսավոր ու պայծառ

<sup>4</sup> Տե՛ս **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, գիրք Բ, գլ. ԼԵ, էջ 63, հմմտ. **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 618:

<sup>5</sup> **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն..., գլ. ԻԵ, էջ 98-99, **Նույնի՝** Հակաճառութիւն, էջ 176-177, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 146, **Ուխտանէս**, գիրք Բ, գլ. Լ, էջ 55:

<sup>6</sup> «Գիրք թղթոց», էջ 149, **Ուխտանէս**, գիրք Բ, գլ. ԼԵ, էջ 61-62, **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 617:

<sup>7</sup> **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն..., գլ. ԻԵ, էջ 99:

<sup>8</sup> Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 611, նաև՝ **Է. Դանիելյան**, Հայ եկեղեցու նկատմամբ խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը, ՊԲՀ, 1981, №3-4, էջ 195-196:

<sup>9</sup> Սահակ Սյունին եղել է Սյունյաց տոհմի նահապետ: Նրա դեմ ապստամբեց եղբորորդին՝ Ստեփանոս Սյունեցին, նահապետության պատիվը ստանալու համար, սակայն բռնվեց և գլխատվեց (տե՛ս «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Արգարյանի, Եր., 1979, գլ. ԻԳ, էջ 95-96):

անուն է թողել հաջորդների հիշողության մեջ: Բավականին դժվար պայմաններում առաջնորդել է հոտը ավելի քան երկու և կես տասնամյակ (608-634)<sup>10</sup>: Սյունյաց պատմիչը նրան պատվում է «Երանեալ հայրն և յօգնապայծառ ճգնաւորն Տէր Դավիթ»<sup>11</sup> գեղեցիկ խոսքերով:

Սյունյաց եպիսկոպոսական աթոռը բարձր դիրքը շարունակեց պահել Հայ եկեղեցու նվիրապետության մեջ նաև Դավիթի օրոք: Սյունյաց առաջնորդն այդ ժամանակ կաթողիկոսարանում կաթողիկոսի գործակից ու խորհրդակից եպիսկոպոսներից էր և այն գլխավոր հոգևորականներից մեկը, որի ստորագրությունը կարևոր էր եկեղեցական գրություններում և փաստաթղթերում: Այդ մասին է վկայում «Գիրք թղթոցի» հետևյալ տեղեկությունը. դավանական խնդիրները լուսաբանելու նպատակով Հայոց Աբրահամ հայրապետը գրություն է ուղարկում Աղվանից Մխիթար և Սիմոն եպիսկոպոսներին: Գրության տակ, ի թիվս այլոց, ստորագրել է նաև Սյունյաց Դավիթ եպիսկոպոսը<sup>12</sup>: Դատելով այս փաստերից՝ Դավիթը եկեղեցական գործի օժտված կազմակերպիչ էր և հմուտ դավանաբան: Նա եղել է այդ շրջանում բեղուն գիտական և կրթական գործունեություն ծավալած Սյունյաց նշանավոր դպրոցի ներկայացուցիչ:

VI դարի վերջերին և VII դարի սկզբներին Հայաստանում ծավալված փոթորկալից քաղաքական և կրոնադավանաբանական իրադարձությունները Հայ եկեղեցու պատասխանատուներին ստիպեցին վերանայելու հարաբերությունները եպիսկոպոսական աթոռների հետ: Այդ գործողությունները Հայոց կաթողիկոսության հովանու ներքո թեմերն ամրապնդելու նպատակ էին հետապնդում: Սկզբնաղբյուրների վկայությամբ, Դավիթ եպիսկոպոսի օրոք վերանայվեց նաև Սյունիքի եպիսկոպոսական աթոռի կարգավիճակը:

Փաստացի ունենալով բարձր դիրք՝ Սյունյաց աթոռը համապատասխան կարգավիճակ էր պահանջում, որն, ըստ էության, պետք է հավասար լիներ Բյուզանդական կայսրության մեջ գոյություն ունեցող մետրոպոլիտի կարգավիճակին: Նա պետք է իրականացներ նահանգի եկեղեցիների կառավարումը, նշանակեր և ձեռնադրեր եպիսկոպոսներ, հրավիրեր եկեղեցական ժողովներ, լուծեր ծագած վեճերն ու կարգավորեր վարչատարածքային խնդիրները: Ինչպես Աղվանից եկեղեցին, թերևս Սյունյաց աթոռն էլ իր պահանջը հիմնավորում էր առաքելական հիմնադրմամբ, քանզի այն հիմնել էր ս. Բարդուղիմեոսը:

Մովսես Կաղանկատվացին, անդրադառնալով Դավիթի օրոք Սյունյաց եպիսկոպոսական աթոռի կարգավիճակին, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այդ շրջանում ծավալված իրադարձությունների մասին: Խոսելով Հայ և Վրաց եկեղեցիների բաժանման գործընթացի մասին՝ նա գրում է, որ հույները հայերին մեղադրում էին եկեղեցու նվիրապետական ինը դասե-

<sup>10</sup> Ըստ Ղ. Ալիշանի՝ Դավիթն աթոռակալել է 605-631 թթ. (տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 20): Հր. Աճառյանը գտնում է, որ Դավիթը պաշտոնավարել է 607-634 թթ. (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942, էջ 26-27, հմմտ. **Ստ. Օրբելյան**, Սյունիքի պատմություն, ներած., թարգմ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 440, ծանոթ. 293):

<sup>11</sup> **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն..., գլ. ԻԸ, էջ 112:

<sup>12</sup> Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 196, հմմտ. **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Եր., 1983, գիրք Բ, գլ. ԽԹ, էջ 276:

րը չունենալու մեջ, որի համար «ի սակս ինն դասակարգութեան՝ գլխավոր եկեղեցականք անձնահաճ կամաւ ըստ նպերտ բարուց Հայաստանեայց, կարգէն զվերահամ պատրիարք, և զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զՎրացն մետրոպոլիտ»<sup>13</sup>: Սակայն վրացիները այն ցածր համարեցին և առիթ դարձրեցին առանձնանալու Հայ եկեղեցուց: Նրանք դարձան քաղկեդոնականներ՝ կրկին թերի թողնելով նվիրապետական ինն աստիճանները: Որպեսզի հույների կողմից «խտորեալ հերձուած» չհամարվեին, Հայոց հոգևոր առաջնորդները որոշեցին Սյունյաց աթոռին շնորհել մետրոպոլիտության պատիվ՝ օժտելով դրանից բխող առանձնաշնորհումներով: Այդ հարցում հաշվի են առնվել Սյունյաց աթոռի ազդեցիկ դիրքը, նրա հովիվների՝ Հայ եկեղեցու դավանանքին հավատարմությունը և ուսման մեջ առաջադեմ լինելը: «Տեսանելով միշտ աստուծերկիւս և հլուս և հաւանս պատուիրանաց զտեսարսն Սիւնեաց, և զկղերս զեկեղեցեացն քաջուսմունս և ուղղափառս յամենայնի,- եզրակացնուն է Աղվանքի պատմիչը,- նոցա ետուն զպատիւն լնելոյ մետրոպոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք, և ոչ ժտել յիրս ինչ աւելի և ոչ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն»<sup>14</sup>:

Ստ. Օրբելյանը հաստատում է, որ այդ ամենը կատարվել է Դավիթ եպիսկոպոսի օրոք. «Կացուցանեն ապա զԴավիթ մետրապօլիտ Սիւնեաց և տան նմա զխաչանիշ նշանն զառաջեաւ կրել հանապազ, և ոչ քարոզել զկաթողիկոսն Հայոց յիւր եկեղեցիսն ի վերայ սրբոյ սեղանոյն, այլ միայն զհլւրն անուն»<sup>15</sup>: Հավանաբար զգուշանալով նոր պառակտումներից՝ Սյունյաց մետրոպոլիտին արգելվեց եպիսկոպոս ձեռնադրել: Օրբելյանը հիշատակում է Սյունյաց աթոռի մետրոպոլիտական մյուս առավելությունները՝ առջևից խաչանիշ նշան կրելը, կաթողիկոսին բարձակից և սեղանակից բազմելը, աստվածապատիվ և հոգևոր տեր պատվանուն կրելը, նահանգի եկեղեցիներում հոգևորականների կողմից կրոնական արարողությունների ժամանակ միայն իր անունը հիշատակելը<sup>16</sup>: Գրագրություններում Սյունիքի մետրոպոլիտները կաթողիկոսին չէին կոչում «եպիսկոպոսապետ» կամ ուրիշ կերպ, այլ «աստուածապատիւ եւ հոգեւոր տեր» էին գրում, իսկ կաթողիկոսը Սյունյաց առաջնորդներին՝ «գործակցից» և «ծառայից»<sup>17</sup>: Սյունյաց աթոռին մետրոպոլիտական պատիվ շնորհելով՝ Հայ եկեղեցուն լրացան նվիրապետական ինը դասերը: Ստ. Օրբելյանը հիշեցնում է, որ մետրոպոլիտական պատիվն ու նշանը երկրորդ անգամ շնորհվեցին Սյունիքի հոգևոր տերերին. առաջին անգամ նման պատիվ ստացել էին Աղվանքի Եսվաղեն թագավորից<sup>18</sup>:

Անդրադառնալով Մովսես Կաղանկատվացու այս ուշագրավ հիշատակությանը՝ հարց է ծագում. թե ինչո՞ւ հենց Սյունյաց և Աղվանից աթոռներին շնորհվեց բարձր պատիվ և ինչո՞ւ այդ քայլի անհրաժեշտություն

<sup>13</sup> **Մովսես Կաղանկատուացի**, գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 274, նաև՝ «Թուխտ երանելոյն Մաշտոցի», «Արարատ», 1902, №7-8, էջ 751-752, հմմտ. **Ուխտանէս**, գիրք Բ, գլ. ԿԳ, էջ 120:

<sup>14</sup> **Մովսես Կաղանկատուացի**, գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 275:

<sup>15</sup> **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն..., գլ. ԻԶ, էջ 105:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 106:

<sup>17</sup> **Մովսես Կաղանկատուացի**, գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 275:

<sup>18</sup> Տե՛ս **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն..., գլ. ԻԶ, էջ 106:

առաջացավ VII դարի սկզբին՝ Աբրահամ Ա կաթողիկոսի օրոք: Այս տեսանկյունից քննելով հարցը՝ հանգում ենք հետևյալին. Հայոց Հայրապետի քայլը թելադրված էր Հայ եկեղեցու միասնականության պահպանման անհրաժեշտությամբ: Բավարարություն տալով հիշյալ աթոռների հավանություններին՝ Հայոց կաթողիկոսը կանխում էր նրանց անջատողական մղումները: Ամենայն հավանականությամբ, Վրաց եկեղեցու անդառնալի բաժանումը Հայ եկեղեցուց, որպես վտանգավոր նախադեպ, խթան հանդիսացավ, որ կաթողիկոս Աբրահամ Ա-ն արագացնի գործընթացը: Դրանով կաթողիկոսական և Սյունյաց աթոռների հաշտության կարևոր հիմք ստեղծվեց<sup>19</sup>:

Սյունյաց եպիսկոպոսությանը տրված մետրոպոլիտական պատիվը մեծ գիշում էր կաթողիկոսական աթոռից: Սակայն իրականում այն արձանագրում էր սոսկ Սյունյաց աթոռի փաստացի բարձրապատվությունը, քանզի մետրոպոլիտի տրված կարգավիճակը չէր համապատասխանում հույն եկեղեցու մետրոպոլիտական աստիճանին: Համապատասխանությունը միայն արտաքին նշանների և կոչումների մեջ էր, իսկ բովանդակությամբ Սյունյաց մետրոպոլիտը սովորական եպիսկոպոսից բարձր դիրք ունեցող հոգևորական էր: Դրա լավագույն ապացույցը նրա կողմից եպիսկոպոս ձեռնադրելու անթույլատրելիությունն էր, ինչը հակառակ էր հույն եկեղեցու կարգերին: Սյունյաց եպիսկոպոսությանը մետրոպոլիտական աստիճան տալով, ինչպես դիպուկ նկատում է Մ. Օրմանյանը, հայերն էլ ունեցան հասարակ եպիսկոպոսությունից ավելի բարձր աստիճան, թեպետ ոչ ըստ ամենայնի հունական նմանությամբ<sup>20</sup>: Սյունյաց աթոռի նոր կարգավիճակը կարելի է բնորոշել «հավասարների մեջ առաջինը» արտահայտությամբ:

Տեր Դավիթի վախճանվելուց հետո Սյունյաց աթոռին որպես տեղապահ նստեց Մաթուսաղա Քերթողը՝ VII դարի Հայ եկեղեցու և նշակույթի նշանավոր գործիչներից մեկը: Ստ. Օրբելյանը հիացմունքով է խոսում իր մեծանուն նախնու մասին՝ բնութագրելով նրան «Մեծն Քերթողն եւ անյաղթ փիլիսոփայն»<sup>21</sup>: Այնուհետև պատմիչը մի շարք կարևոր տեղեկություններ է հայտնում, որոնք լույս են սփռում այդ խոշոր մտածողի և գիտնական վարդապետի գործունեության վրա: «Ո՞վ է Մաթուսաղան» հարցին պատմիչը պատասխանում է. «Այս Մաթուսաղայ էր սմեալ ամենայն պարկեշտութեամբ և զարգացեալ ամենայն առաքինութեամբ. ուսեալ զքերթողութիւնն և վարժեալ ճարտասանականան. հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ»<sup>22</sup>: Մաթուսաղան ուսանել է Սյունյաց վարդապետարանում՝ աշակերտելով այնտեղ դասավանդող նշանավոր գիտնականների: Բնատուր տաղանդի

<sup>19</sup> Ա. Ջամինյանի կարծիքով՝ այդ պատիվը տրվեց Սյունյաց փառասիրությունը գոհացնելու համար (տե՛ս Ա. Ջամինեան, Պատմութիւն Հայ եկեղեցւոյ, Նոր Նախիջեւան, 1908, էջ 114): Այս տեսակետը ընդունելի չէ, քանզի անհրաժեշտ ներքին և արտաքին նախադրյալների բացակայության պայմաններում Հայոց հայրապետը Սյունյաց հոգևորականությանը նման շռայլում չէր կարող թույլ տալ:

<sup>20</sup> Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 644, հմմտ. Դ. Ինժիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 242, ծանոթ. 1:

<sup>21</sup> Ստ. Օրբելեան, Պատմութիւն..., գլ. ԻԸ, էջ 112:

<sup>22</sup> Նույն տեղում:

շնորհիվ ստացել է վարդապետական աստիճան և քիչ ուշ հաստատվել վարդապետարանի գլուխ: Նրա ուսուցչապետության շրջանում վարդապետարանը մեծ առաջընթաց է ունեցել գիտության ասպարեզում, տվել փայլուն աշակերտներ. «Վասն որոյ տեսեալ յայնմ ժամանակի պայծառացեալ իմաստայեղց ճառագայթիւք զերանելին Մաթուսաղայ, վարժեալ և սնեալ ի նոյն տան՝ կացուցանեն յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ. և նստուցանեն գլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձր և ահարկու ամբիոնի րաբունարանին, յորմէ բղխէր գետօրէն աստուածային իմաստութիւնն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն»<sup>23</sup>: Ստանձնելով վարդապետարանի ղեկավարությունը՝ Մաթուսաղան միաժամանակ նշանակվում է Սյունյաց եպիսկոպոսական տեղապահ:

Մաթուսաղայի օրոք մեծ ծաղկում ապրեց Սյունյաց դպրոցը, որի կենտրոնն էր Շաղատի վարդապետարանը: Այստեղ կրթության մակարդակն այդ շրջանում ավելի բարձր էր, քան Հայաստանի մյուս դպրոցներում<sup>24</sup>: Այդ էր պատճառը, որ Հայաստանի զանազան գավառներից, ինչպես նաև այլ երկրներից հայ երիտասարդները դիմում էին դեպի Սյունյաց վարդապետարան՝ շարունակելու ուսումը և կատարելագործվելու քերթողական արվեստում: Վարդապետարանի մեծ հռչակը պայմանավորված էր նաև Մաթուսաղայի անձով<sup>25</sup>, որի համբավը որպես առաքինակրոն հոգևորականի, խոշոր դավանաբանի և գիտնական վարդապետի շուտով տարածվեց ողջ Հայաստանում: Հայոց Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը (615-628 թթ.), որ նաև VII դարի նշանավոր մատենագիրներից է, արժևորելով Մաթուսաղա քերթողի մեծությունը, նրա մոտ է ուղարկում դեռահաս սանին՝ իր եղբորորդի Թեոդորոսին, որին ինքը սիրով և սրբությամբ էր դաստիարակել. «Յայսմ համբաւոյ հրաշացեալ սուրբ պատրիարքն Կոմիտաս՝ զանց արարեալ զամենայն վարդապետօք կաթողիկոսարանին, նաև զվարդապետարանս Հայոց, որ յԱրշարունիսն էր, յորում զմանկունսն ժողովեալ էին ճարտարք և գիտունք Հայոց, այն որ յԵրասխաձորին է, զոր այժմ Վարդիկ հայր կոչեն, յղէ առ քերթողն Սիւնեաց Մաթուսաղայ զիւր ձեռնասուն համբակն, զոր մեծափափագ սիրով սնուցանէր սրբութեամբ զԹեոդորոս՝ եղբորորդի իւր»<sup>26</sup>: Շրջանցելով ժամանակի խոշոր դպրոցները և հայտնի գիտնականների շարքում նախապատվությունը տալով Մաթուսաղային՝ կաթողիկոսը, անշուշտ, շատ բարձր է գնահատել թե՛ վերջինին անձը, թե՛ վարդապետարանի գիտական վարկը: Մաթուսաղան Հայոց կաթողիկոսի վստահությանը և գնահատանքին արժանի գտնվեց. առանձնահատուկ խնամքով և խորությամբ ուսուցանեց Թեոդորոսին՝ ավանդելով թե՛ տեսական, թե՛ գործնական հիմնավոր գիտելիքներ: Նրան հասցրեց կատարելության դավանաբանության ասպարեզում:

Մաթուսաղայի հեղինակությունն այնքան մեծ էր, որ երկրում տեղի ունեցող քաղաքական, հասարակական և կրոնական կյանքին վերաբերող հարցերը քննելիս միշտ դիմում էին նրա խորհրդին:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>24</sup> Տե՛ս **Ա. Ալաջաճեան**, Պատմութիւն հայ դպրոցի, հ. Ա, Գահիրէ, 1946, էջ 150:

<sup>25</sup> Տե՛ս **Ղ. Ինձիճեան**, Յնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց, հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 111:

<sup>26</sup> **Ստ. Օրբէլեան**, Պատմութիւն..., գլ. ԻԸ, էջ 113:

Հայոց Քրիստափոր Բ Ապահունի կաթողիկոսի (628-630) մահից հետո՝ Եզր Ա Փառաժնակերտցու հայրապետության օրոք (630-641), Բյուզանդիայի Հերակլ կայսրը (610-641) առաջարկեց Հայ եկեղեցու հովվապետերին դավանանքի քննություն անցկացնել Կարին քաղաքում: Ընդունելով առաջարկը՝ Թեոդորոս Ռշտունին և հայ նախարարները խորհրդակցեցին Եզր կաթողիկոսի հետ, պատվիրեցին հավաքել ազգի իմաստուններին և մասնակցել ժողովին: Միաժամանակ նրան հիշեցրեցին և զգուշացրեցին՝ որպես գիտուն աստվածաբան իր հետ տանի Մաթուսաղային. «Մի լիցի քեզ շարժիլ ի տեղոյս առանց Մաթուսաղայի Սիւնեցոյ... մի գուցէ և փլուցանէ չարն զգեղեցիկ շինուածս հաւատոյս մերոյ»<sup>27</sup>: Անսալով հայոց քաղաքական առաջնորդներին՝ Եզր կաթողիկոսը պատվիրակություն է ուղարկում Մաթուսաղայի մոտ, խնդրում օգնել՝ դուրս գալու ստեղծված ոչ ոյուրին իրավիճակից: Նա մերժում է Եզրի առաջարկը՝ շեշտելով վարդապետարանի գործերի կարևորությունը և պատճառ բերելով իր վատառողջությունը: Սակայն իր փոխարեն ուղարկում է Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդուն՝ Թեոդորոսին՝ հայոց դավանության մասին Բյուզանդիայի Հերակլ կայսրին ուղղված թղթով<sup>28</sup>:

Մաթուսաղայի վերաբերմունքը, հասկանալի է, միանշանակ գնահատականների չի արժանացել: Համակողմանիորեն ուսումնասիրելով սկզբնաղբյուրների վկայությունները և դրանք գնահատելով ժամանակի կրոնական և քաղաքական իրողությունների լույսի ներքո՝ կարելի է ասել, որ Մաթուսաղան չի անտեսել Հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքների անաղարտության պահպանման կարևորությունը: Ըստ «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցոյ» վերնագրով սկզբնաղբյուրի հեղինակի տեղեկությունների՝ Կարնո ժողովից<sup>29</sup> առաջ՝ Քրիստափոր Բ կաթողիկոսի օրոք, տեղի է ունեցել «հաւատոյ քննութիւն», այսինքն՝ ժողով, ուր հայոց վարդապետներից մասնակցել է նույն Թեոդորոսը<sup>30</sup>: Թեոդորոսն այդ ժողովում իրեն դրսևորել է որպես հայոց ճշմարիտ հավատքի ջատագով և հաջողությամբ պաշտպանել Հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքները: Հետևաբար, Մաթուսաղան և Հայ եկեղեցու մյուս հովվապետերը, երաշխավորելով Թեոդորոսին մասնակցելու նման պատասխանատու ժողովի, քաջ գիտեին նրա և՛ հայացքները, և՛ կարողությունները:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>28</sup> Մաթուսաղայի նման քայլն ուսումնասիրողները տարբեր կերպ են մեկնաբանել, որոնք թերի և միակողմանի են: Ա. Սեդրակյանի կարծիքով՝ Մաթուսաղայի հրաժարվելու իսկական պատճառն այն էր, որ նա չէր հավատում կաթողիկոսի անկեղծությանը և նրա առաջարկը համարում էր լոկ ձևականություն (տե՛ս Ա. Սեդրակյան, Հայաստանեայց եկեղեցու պատկերյալագրությունը, մասն Ա, Ս. Պետերբուրգ, 1904, էջ 338): Մ. Մուրատյանը գտնում է, որ Մաթուսաղան հրաժարվեց, քանզի տեղյակ էր հույների ճամարտակություններին և գիտեր, որ այդ ժողովում ոչ թե քրիստոնեական խորհուրդների անկեղծ քննարկում է լինելու, այլ քաղաքական և կրոնական հնարքների օգտագործումով կամքի թելադրում (տե՛ս Մ. Մուրատյան, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցոյ, Յերուսաղէմ, 1872, էջ 282):

<sup>29</sup> Մ. Օրմանյանը գտնում է, որ «Կարնոյ ժողով» կոչվածը իսկական եկեղեցական ժողով չի եղել, այլ ավելի շուտ՝ բանակցություններ (տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 693):

<sup>30</sup> Տե՛ս Կ. Տեր-Սկրտչեան, Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ, Հայագիտական ժողովածու», գիրք Ա, 1913, էջ 107:

Կարնո ժողովից (633 թ.) հետո կատարվածին մոտիկից ծանոթանալու նպատակով Մաթուսաղան ուղևորվում է Դվին: Նա տեղեկանում է, որ այնտեղ ընդունվել է «մի կամք և մի գործողութիւն»<sup>31</sup> բանաձևը, ինչը պարունակում էր նաև «մի բնութիւն» դավանության սկզբունքները: Պատշաճ բացատրություն ստանալուց հետո Մաթուսաղան չի հերքում, բայց և չի ընդունում միակամյա վարդապետությունը<sup>32</sup>, այլ լռում է: Հետևաբար, նշանակում է, որ նա գիտակցել է բյուզանդացիների՝ կրոնական շղարշով պատած քաղաքական ենթատեքստ ունեցող հարցի էությունը: Այլապես հայոց ուղղադավանության սկզբունքների պաշտպանության հարցում Մաթուսաղան երբեք չէր ընկրկի որևէ մեկի հեղինակության առջև:

Եզր կաթողիկոսը Մաթուսաղային ձեռնադրում է Սյունյաց եպիսկոպոս (634-643) և «մեծաւ պատուով արձակեցին յաթոռն իւր և ի վիճակ»<sup>33</sup>: Վերադառնալով իր թեմ՝ նա սրբությամբ ու բարեպաշտությամբ է հովվում և, հայրերից ավանդված ճշմարիտ դավանանքին հավատարիմ, հեռու է պահում հոտը քաղկեդոնականությունից և այլ մոլորություններից:

Ստ. Օրբելյանը Կարինի ժողովի հանգամանքների առնչությամբ հիշատակում է Մաթուսաղայի գրած դավանության թուղթը՝ ամբողջությամբ զետեղելով այն իր երկում: Թուղթը գրվել է Եզրի առաջարկությամբ<sup>34</sup>: Դա Հերակլ կայսրի՝ հայերին ուղարկած դավանական գրի պատասխանն էր: Թուղթն ուղղված էր Հերակլ կայսրին՝ իբրև բացատրական դիտողագիր: «Դաւանութիւն հաւատոյ» ընդարձակ գրության մեջ, որը նա, հավանաբար խմբագրել էր հունարեն<sup>35</sup>, հեղինակը պաշտպանում է Հայ եկեղեցու ուղղափառ դավանանքը՝ Հերակլին հիշեցնելով, «թէ որչափ ալ միակամեայ դրութեան հետեւանօք հոգեւոր հաղորդակցութիւնը յանձն առին, սակայն, քաղկեդոնական դաւանութեան մասին իրենց համոզումը չեն փոխած և անոր բանաձևը ուղիղ չեն գտներ»<sup>36</sup>:

Պատասխանելով մեղադրանքներին, թե Հայ եկեղեցին «Սուրբ Աստված» սրբասացության մեջ «Աստված խաչված» և «անմահն խաչված» է ասում, Մաթուսաղան հիմնավորում է, որ այստեղ ոչ մի հերետիկոսություն չկա, քանզի «անչարչարը չարչարվեց չարչարողով, անմահը մեռավ մահկանացուով, այսինքն թե՛ անչարչար Բանն աստված մեռավ իր մարմնով»<sup>37</sup>: Նա շեշտել է աստվածայինի և մարդկայինի անքակտելի ու անճա-

<sup>31</sup> 626 թ. Կոստանդնուպոլսում հրավիրվել էր եկեղեցական ժողով, ուր տեղի Սերգիոս պատրիարքը (610-638) առաջ էր քաշել միակամության վարդապետությունը, ըստ որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն, մի դեմք, մի կամք և մի ներգործություն (տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 687, նաև՝ **Եզնիկ Պետրոսյան**, Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա, Հաղբատավանք, 1990, էջ 60): Միակամական դավանանքը հունարավանությունն էր:

<sup>32</sup> Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, №6, էջ 468:

<sup>33</sup> Ստ. Օրբելյան, Պատմութիւն..., գլ. ԻԸ, էջ 118:

<sup>34</sup> Ըստ Մ. Չամչյանի՝ Եզր կաթողիկոսի առաջարկով այս թուղթը գրելու հանգամանքը կասկածելի է (տե՛ս Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Բ, Եր. 1984, էջ 544):

<sup>35</sup> Տե՛ս Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 150:

<sup>36</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 697:

<sup>37</sup> Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 141:



ռելի միասնությունը, հետևաբար՝ ով չի ասում «Աստված խաչված», չի էլ ընդունում Աստծուն Կույսից ծնված, իսկ Կույսին՝ Աստվածածին:

Անդրադառնալով իր ժամանակակիցների կողմից այդքան բարձր գնահատված վարդապետի մատենագրական ժառանգությանը՝ նշենք, որ մինչ այժմ նրանից պահպանված միակ գործը հիշյալ գրությունն է: Սակայն միանշանակ է, որ նա հեղինակել է նաև ներբողներ, ճառեր, որոնք, հիրավի, կարող էին զարդարել հայ մատենագրության գանձարանը:

Այսպիսով, փաստերի հանգամանակի քննությունը ցույց է տալիս, որ 607 թ. Դվինի եկեղեցական ժողովի երկրորդ նիստում վերականգվել է VI դարի վերջերին ընդհատված հարաբերությունները Չայրապետական և Սյունյաց աթոռների միջև, որն առաջացել էր քաղաքական անկայուն հանգամանքների պատճառով: Միևնույն ժամանակ Սյունյաց եպիսկոպոսական աթոռին շնորհվել է մետրոպոլիտության կարգավիճակ, ինչը թելադրված էր Չայ եկեղեցու միասնականության պահպանման անհրաժեշտությամբ:

Փաստորեն, հիմնադրված լինելով Գրիգոր Լուսավորչի կողմից դեռևս չորրորդ դարում՝ Սյունյաց եպիսկոպոսությունը յոթերորդ դարի առաջին կեսին ունեցել է բարձր պատիվ Չայ եկեղեցու նվիրապետության մեջ և, շնորհիվ իր արժանավոր հոգևոր առաջնորդների, նշանակալի ավանդ ներդրել հայ միջնադարյան մատենագրության զարգացման ասպարեզում:

**ВАРДАН АЛЕКСАНИЯН – Сюникское епископство в первой половине VII века.** – Статья посвящена Сюникскому епископству, одной из наиболее значительных епархий Армянской церкви. Рассматриваются, в частности, его взаимоотношения с патриаршеским престолом. В означенное время между ними возобновились временно прерванные связи. Судя по данным, приведённым армянскими летописцами, именно в начале VII века сюникскому епископу был присвоен сан митрополита.

Убедительные аргументы обосновывают мнение, что функции сюникского митрополита отличались от функций, присущих византийским митрополитам.

Особое внимание уделено деятельности таких известных сюникских духовных пастырей, как Христофор, Давид и Матусага, поочередно возглавлявших епархию в ту пору. Все они последовательно поддерживали традиции прославленной сюникской школы.

**VARDAN ALEXANYAN – Syunik episcopacy in the first half of the 7<sup>th</sup> century.** – The paper discusses the activity of Syunik episcopacy, one of the most famous sees of the Armenian Church, in the first half of the 7<sup>th</sup> century. With respect to the relations between the Patriarchal and Syunik sees, the author notes that the temporary breach in their relations was restored at the beginning of the 7<sup>th</sup> century. Based on the facts provided in the works of medieval Armenian manuscript writers, the author claims Syunik bishop to have been conferred metropolitan rank at the beginning of the 7<sup>th</sup> century.

There are cogent arguments proving that the functions of metropolitan of Syunik differed from those in the Byzantine Empire.

The paper also provides thorough illustration of the religious-cultural activities of outstanding Syunik pastors, Christopher, David and Matusagha, descendants of famous Syunik school in the first half of the 7<sup>th</sup> century.